ՏԱՂ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

Կիտվինք գնանք երկնյա ծովին,
Վարդ կու քաղենք հերկվա հովին,
Թամամ աշխարհ քեզ կը գովին,
Սալվու չինար, էջմիածի՛ն:

Էջմիածին բարձր սար ա,
Աղբրներդ կարմիր քար ա,
Քո մատաղդ կապույտ գառ ա,
Սալվու չինար, էջմիածի՛ն:

Էջմիածին, դու հեռու՝ զորքդ մոտիկ,
Մեջքդ կապեր կարմիր գոտիկ,
Ըխտավորդ գա գլուխ, ոտ բոբիկ,
Սալվու չինար, էջմիածի՛ն:

Էջմիածին՝ ալա դարի,
Թամամ աշխարք ոտքդ բափի,
Քո Մեռոնդ անկրակ կեփի,
Սալվու չինար, էջմիածի՛ն:

Էջմիածին ուչար դուշ ա,
Ըխտավորդ գա դոշա-դոշա,
Խնդրում եմ ինձի տաս փեշա,
Սալվու չինար, էջմիածի՛ն:

Ես եմ Ակոբ Ախավանցի,
Ազգատակով Երևանցի,
Ես արժանի չի, քեզ գովեցի,
Սալվու չինար, էջմիածի՛ն: